

ՀԵՉԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀԵՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿՐԵՏԵԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ.

Մինչդեռ հայկական դասը ներկայումս գտնվում է — թող ներվե մեզ այս ոճը — մի թաքուն յղութեան մէջ, ահա յանկարծ պայթում է Արեւելի ապստամբութիւնը: Թիւրքիայում ամեն ազատ ստրուկ ապստամբեան դուռն է բաղխում: Եւ այդ երեւոյթն անընդհատաբար շարունակվում է, և կը շարունակվի, մինչև որ այդ երկաթեայ դուռը կը խորտակվի: Եւ Արեւելի փոքրիկ քաջ ժողովուրդը, որ սասնեակ տարիներէից ի վեր միշտ բողոքող ու անհանդիստ և մերթ ընդ մերթ նոյն խել ապստամբ է եղել, այս անգամ որոշել է տալ իր վերջին հարուածը և ազատել իր գլուխը սուլթանական կացնի տակից: Եւ բռնապետական Թիւրքիայի ճակատագիրն է դարձել միշտ եկեթակայ լինել իր «րայեաների» ապստամբական մուրձերի զարկերին.... Իսմին, դուռը, հայ, այժմ կրէտացի — և ամենքն էլ միեւնոյն սալին են զարկում, սուլթանական բռնապետական գահին, որի կոտորածուն ձարձատիւնը լըրել է իր ազմուկով ամբողջ աշխարհ: Ինչպէս մի հաւ, որին բռնում են ոտներէից, նա յուսահատաբար թեւահարում է, ձգնելով իրան փրկել ապստամբական գանակից, նա, որը մահաւան է գատապարտված, նա — սուլթանական թէփուր: Չեղբերը լի արիւնով ու կեղտով՝ սուլթանը տեսնում է իր կայսրութեան կործանումը, որ արագաբար, ճակատագրական կերպով կատարվում է օրից օր, մինչև որ այդ օսմանեան եղեռնակի ողբերգութեան վերջին օրւայ ժամը կը հնչէ: Արովհետև որքան էլ ջարդեր եղան հայերի գլխին, որքան էլ իր հրպատակների արիւնով լեցրեց սուլթանն իր գինու անցատակ կարամները, որքան էլ նա ճիգ թափեց ջրտեղ ու վերացնել յեղափոխական տարրերը, այնուամենայնիւ ամեն տարակուսանքից դուրս է, որ օսմանեան բռնապետութիւնն այդ ամենով առաջնապէս և իսկապէս պատրաստեց ու առաջ մղեց իր սեփական կորուստը:

Տակաւին չէ կարելի որոշել, բնականաբար, թէ ինչ էլք կը ստանայ կրէտական ապստամբութիւնը. բայց անհերքելի է, որ ներկայումս Արեւելի վիճակն աւելի ծառայում է յօգուտ նոյն իրանց Արեւացիների և ոչ վախկոտ ու զայրալի խոյլեֆայի շահերին: Ահա ձայն է բարձրացել

միացնել Արեւելն իր մայր հողի, Յունաստանի, հետ, ուր յոյն ժողովրդի բուռն, ոգեւորված ու դործնական ցոյցերի և Արեւելի ապստամբներին աջակցելու փորձերն ազդեցութեան տակ հելլենական կառավարութիւնը հակվել է նոյն նպատակին, որ և իր վաղեմի երազն էր: Հելլենական թագաւորը — հաւանականաբար ձեւականութեան համար — հակառակ է յայտնվել այդ նախագծին, երբ դրա մասին տեղի է ունեցել խորհրդածութիւն հելլեն մինիստրութեան ժողովում: Բայց այդ մինիստրութիւնն իր զգացումով ու նպատակով ամբողջ հելլեն ժողովրդի հետ է, և այդ պարագայում, եթէ պէտք լինի, նրանք դուրս կը շարունակեն Հելլադայի պատմական փառաւոր պարիսպների գլխով իրանց թագաւորին էլ, որ իր ուսասիրական քաղաքականութեանը հակառակ գործ է նկատում Արեւելի ապստամբութիւնը:

Ռուսական քաղաքականութիւն — մենք խօսքն ասացինք. Եւրօպայի քաղաքական աշխարհում Արեւելի ապստամբութիւնն, արգարեւ, նրկատվում է իրբև ուսաց տէրութեան շահերի հակառակ մի գործ: Ղա նկատվում է իբրև մի հակահարուած ուսական դիպլոմատիայի այն աջողութիւններին, որ նա ունեցաւ հայկական խընդրի առիթով՝ Վ. Պօլսում՝ Եւրոպ Վէօշկի եղերական լաբիւրինթոսներում, աջողութիւններ, աւաղ, որ այնքան ծանր նստեցին հայ ժողովրդին:

Մի կամ միւս եղանակով, մի կամ միւս ազդեցութեամբ, ինչպէս էլ որ աւարտ ստանայ կրէտական ապստամբութիւնը — ուրիշ խնդիր, սակայն պարզ է, որ հայկական շարժումներից և հայկական աղէտներից խել յետոյ, ներկայիս կրէտական շարժումները գալիս են մէկ այլ ևս անուղղելի հարուած տալու Թիւրքին, ծակելու նրա աւագակային ու մարդասպանի վահանը և նետը շեշտակի խրելու նրա սրտում: Այդ տեսակէտից կրէտական ապստամբութիւնն աւելի քան ժամանակայարմար է Արեւելի օգտին և միւս կողմից՝ նպաստաւոր է մեր դատի համար, որ զօրանում է միացումով մի նոր սուրբ գատի — Արեւելի ապստամբեան դատի:

Տեսնենք այժմ, թէ դէպի այդ փոքրիկ արիւստիտ ժողովրդի դատն ինչ ընթացք կը բռնէ եւրօպական դիպլոմատիան, որ այնքան ստորաբարձ

ու եսամով յայնպեցաւ դէպի հայերիս փրկութեան գործը: Մենք տարակոյս չունենք, որ մեր կրէսացի եղբայրներն արդէն բաւական դաս առին մեր դատի առիթով այդ մեծամով ու խնորհաւոր զիպլումասիայի նկատմամբ: Վաջ Արէտէի դատը թանկ ու սիրելի է մեզ համար: Նա թանկ է, նա սիրելի է ամենից առաջ իբրեւ մի սարուկ ժողովարարի ազատման գործ, և ապա նա թանկ է, նա սիրելի է իբրեւ սուրբ կռիւ ընդդէմ մեր և նրանց ընդհանուր թշնամիի, որ իր երկաթէ բռնան տակ խեղդում է թէ Արէտէին և թէ Հայաստանը: Արտատրոփ, անձկութեամբ ու անհամբեր՝ մենք հեռեւում ենք մեր լծակից եղբայրների կռիւներին և սրտանց մաղթում նրանց փառաւոր ու յաղթական վախճան:

Թող սարուկ ժողովուրդներս դադար չը տանք բնաւ մեր սուրբ պատերազմին ընդդէմ մեր պոռնիկացած, եղենոնադործ ու սարսափելի թշնամու. թող չը յուսնեն մեր ձեռքերը դէնքի ու սրի հարուածները տալուց. թող միշտ և միշտ, ձախորդութիւնների ու աղէտների, որպէս և տըղղութիւնների ու յաղթանակների միջոցին, ամեն ժամանակ ոգեւորվեն մեր սրտերը և կրկնապատկէ մեր կատաղութիւնն ընդդէմ այն ատելի թշնամու, որ այսօր ամեն ճիգ թափելով, ձգտում է մարդկային ցեղի դէմ գործած իր անթիւ դժոխային մեղքերի, յանցանքների ու ոճիրների ծանրութեան տակ ջնջել ու ոչնչացնել աղատութեան ու մարդավայել կեանքի կարօտ ու ծարաւ ժողովուրդներին:

Առհնձր երկաթը, քանի տաք է:

Կեցցէ՛ Արէտէ:

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍԵՄԲՈՒԹԻՒՆԸ.

ԶԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՔՐՈՆՈՒԶԻ ԴԵՊԲԵՐԻ. *)

Հակառակ գիշերային սովորական լուսութեան՝ հակապատկերը տեղի կունենար: Մերթ ընդ մերթ կը լսուէին այս կամ այն կողմէ հրացանի մի կամ մի քանի հարուածներ: Հաւերը խուժը խուժը լեռներէն գիւղ կիջնէին և գիւղէն լեռները կը բարձրանային, որով երբեմն կը պատահէր որ խոշոր ժայռեր գլորուելով վայր՝ ահագին՝ աղմուկ կը հանէին: Թշնամու բազմացել ու խառնիճաղանձ բանակը կը գտնուէր մեր դէմը՝ ցածը՝ ընդարձակ տարածութեան վրայ: Նա պաշարած էր մեզ. մեր շուրջը երկու ժամայ տարածութեամբ, գետի երկու եզերքները երեքական կարգով պատերազմական մի երկար շղթայ էր հիւսած: Ցաննակ հազարներով բոցեր կը վառուէին վեց ժամայ տարածութեան վրայ՝ Հայերը լեռների վրայ, իսկ թշնամին ցածը:

Ահա-գիշերին հաւաքուեցանք գիւղի մէջ խորհելու և

որոշելու մեր բռնելիք ընթացքի մասին: Այդ միջոցին մեզ հանգիպեցաւ եկեղեցու վարի կողմը մի ղուլայի ետին՝ կրծքէն սպաննուած գիւղի նշանաւոր քահանան Ղեւոնդ Ալաճաճեանը, որն արիաբար մասնակցած էր ամեն պատերազմներին և ընդմիշտ քաջալերող օրինակ հանդիսացած գիւղացի ժողովուրդին: Ժողովուրդը շատ կը սիրէր այս քահանայն. վերցուցին անոր արեւնաթաթախ դիակը, և եկեղեցու մէջ թաղելով կատարեցին նահատակի վերջին փափաքը:

Բոլոր կտրիճները հաւաքած մտածեցինք յարձակուել թշնամու վրայ և կտրելով շղթայի մի մասը անցնել միւս կողմը: Սակայն ժողովուրդի մեծամասնութիւնը չընդունեց այս. իւրաքանչիւրն ունէր իր կինը, զաւակները, երեխաները, վիրաւորուածները, որոնցմով միասին յարձակուել անկարելի էր: Վերջապէս որոշեցինք բարձրանալով լեռները ապաստանել յարմարագոյն քարայրների ու անառիկ կրճերի մէջ: Եթէ թշնամին այդ տեղերն ալ բարձրանաւ լինի՝ մինչև վերջին գնդակը պատերազմել, մինչև վերջին շունչը գիմագրել և այնուհետև մեռնել սիրելիների ու զաւակների հետ:

Մինչև առաւօտ հայ գիւղացի ընտանիքները միացած իրար հետ, խմբեր կազմած տեղաւորուեցան լեռան բարձունքների վրայ և Չուգուր Հիսարի կրճի երկու եզերքները գտնուած նշանաւոր քարայրների մէջ: Ընդհանրապէս քարայրների ներսը, ապահով անկիւնները նստոտած էր ընտանիքի այն մասը, որն անկարող էր դէնք գործածել. իսկ կտրիճները դէնքերը ձեռքերին քարայրների ու կրճերի բերանները կըսպասէին հերոսական կռիւր մղելու, վերջին սուրբ պարտականութիւնը կատարելու իրենց ընտանիքն ու զաւակը, պատին ու կեանքը փրկելու համար...

Առաւօտը կանուխ երկու կողմէն կատաղի կերպով վերսկսաւ հրացանաձգութիւնը. ուժերն ու գնդակները կը տեղային գիւղի և լեռների վրայ: Գիւղը թէպէտ պարպուած էր, սակայն թշնամին անկարող կը գտնուէր գիւղ մտնել՝ վերելի սարերէն արձակուած գնդակների պատճառով. նախ երկու հազարի չափ զինւորներ ցրուեցան լեռների ստորոտը, գլխաւոր նեղ անցքերի վրայ խուժը-խուժը զինուորներ դրուեցան և յետոյ սկսաւ սաստիկ ուժեղացում թիւն. այսպիսի միջոցներով կէս օրէն վերջ հաղի կարողացաւ գատարկուած գիւղը մտնել թշնամին:

Այդ օրը լեռան ամեն կողմերը բազմաթիւ գիւցազնական կռիւներ տեղի ունեցան: Հայ կտրիճները կը մաքառէին մինչև վերջին շունչը, թէկուզ մի քանի տեղերէ վիրաւորուած լինէին. հայ կիներն ու երեխաներն անգամ կը մասնակցէին սոյն կռիւներուն. եթէ անկարող էին հրացան պարպել՝ ահագին ժայռեր կը փրցնէին և կը գլորէին թշնամու վրայ. իրենց աղաղակներով խրախոյս ու ոգեւորութիւն կը ներշնչէին պատերազմող քաջերին... պատահեցաւ կիներ, օրիորդներ, որոնք պատերազմի միջոցին կորսնցուցած լինելով իրենց պաշտպանող էրիկ մարդոց և, չուղելով անձնատուր լինել անբարոյական ու վայրենի թշնամուն, իրենց սիրուն զաւակները կրճերին սեղմած բարձր ժայռերէ ցած գլորուելով անձնասպան եղան, ինչպէս Ալաճաճեան ընտանիքէն 16 տարեկան մի օրիորդ, Գըլլեհան Կարապետի կինն իր զաւակով միասին...

Մինչև երեկոյ տեւեցին սոյն առանձին-առանձին

*) Տես «Հնչակ» թ. 9, 10 և 11.

Տերոսական կռիւները, որոնց մէջ քաջաբար դիմագր-
րելով սպաննուեցան լեռան կողմը՝ Թէլէմէյի գիւ-
ղապետներէն նշանաւոր Տաճի Պտուկը, որը հինգ-
վեց տեղէ վերաւորուած լինելով հանդերձ, դարձեալ
երկար ատեն օրինակելի քաջութեամբ կռուեցաւ,
իսկ դաշտի կողմը՝ Կապանի նշանաւոր և անձնուէր
քահանան տ Թէոփորոս Շահինեանը, Շիվիլ-
կի գիւղապետներէն Խաչեր Էֆէնտին, և ինքն...

Երեկոյեան դէմ թշնամին նկատելով, որ իր
տաննակ հաղարներով անկարող պիտի լինի լեռն
ապաստանող հաղարաւոր հայերին անձնատուր տանել
և կամ կոտորել, և միանգամայն յուսահատ կերպով
դիմելով իր հարկաւոր զոհերի վրայ, որոնք չարա-
չար սպաննուած էին հայ կորիճների գնդակներով և
կամ պատուանդիւր, անձնուրաց հայուհիների գլու-
րած ժայռի կտորներէն, անամօթաբար ետ քաշուե-
ցաւ և ամիսիւնեցաւ մի ամուր բլրի շուրջը:

Վեկտեմեր 4, երկուշաբթի օրը թշնամին բոլո-
րովին յուսակտուր լինելով բարձրերն ապաստանողնե-
րի տոկունութեան ու յամուութեան պատճառով, նա-
մանաւանդ երկուշաբթի օրը մշուշային աննպաստ
հանգամանքներէն, առաւօտը կանուխ բանակի կէտը
տեղափոխեց Զէյթունի ճանապարհի վրայ գտնուած
Թէքիլի ջրի հիւսիսային եզրերը:

Այդ օրը մի քանի մանր մունր կռիւներ միայն
տեղի ունեցան այժերի պատճառով: Չէրբէղներ և պա-
շկաօղուզներ փորձեցին լեռան հիւսիսային ստորոտը
գտնուած մի քանի հարկուր այժերը քշել, սակայն հա-
յերը դիմադրելով թող չը տուին:

Հետեւեալ օրը կանուխ թշնամու բանակը՝ ժողո-
վելով իր ցրուած որսորդական խմբերը, պահապաննե-
րը և վերջապահ խումբը՝ մշուշի միջով ուղղուեցաւ և
անհետացաւ դէպի Զէյթուն, ուր արդէն պատերազմը
տեղի կունենար և այդ օրն աւելի սուր կերպով և
շարունակաբար կը լսուէին թնդանօթների ձայներն ու
որոտները:

Սոյն պատերազմների մէջ տեղի ունեցան բազմա-
թիւ վիպական գոյն ունեցող դէպքեր և հերոսական
գործեր, որոնք առ այժմ զանց ենք արած: Միայն յի-
շենք որ «Աւօ» զօրագնդի խմբապետներէն պ. Կարա-
պետ Սուքիասեանը Թէքիլի պատերազմի ամենատար
ժամանակին յանկարծ կըզգայ թէ բոլորովին մենակ շըր-
ջապատուած է թշնամիներէ: Գնդակների տարափի տա-
կով մի քանի վայրկեան այս ու այն կողմ կը վազվը-
զէ ընկերները գտնելու կամ ֆլուշուղ իջնելու նպա-
տակով. սակայն այդ անկարելի լինելով՝ կըստիպուի
կռուելով ապաստանել լեռան արևելեան ստորոտը՝ թըշ-
նամու բանակի դէմ գտնուած մի քարայրի մէջ: Այդ
նեղ քարայրը կապասէ ամբողջ երեք օր բոլորովին
ծարաւ և անօթի վիճակի մէջ. և յետոյ՝ թշնամու
հեռանալէ վերջ կը միանայ լեռն ապաստանողների հետ:

Թրքական բանակի հեռանալէն յետոյ լեռն ա-
պաստանողների միայն զինուորուած մասն անմիջապէս
խմբուեցաւ կորճի բերանը՝ Շուղուր կոչուած տեղը:
Աննուաճ ժողովրդի զարյոթն ու վրէժխնդրութեան
զգացումը դէպի բռնութիւնը՝ կատարութեան աստի-
ճանի էր հասած: Կորիճները ոչ միայն չէին յուսա-

հատած, այլ իրենց այս վիճակն ու դէպքերը ստեղ-
ծեցին իրենց սրտի մէջ ինչ-որ տոկունութեան ու ան-
վեհերութեան բարձր ոգի: Այդ օրն իսկ բաժանեցինք
խմբերի, որոնց մի մասը պէտք է պաշտպանէ կիներին
ու զաւակներին, իսկ միւս մասը ցրուելով Սու-
լա-չաթի և Սէկի ճանապարհների վրայ, որտեղէն կանցնէին օգ-
նութեան հասնող թիւրքեր և բանակի պաշարը՝ պէտք
է կտրէ առջևները և վնասներ պատճառէ:

Այդ երկու շաբաթեայ միջոցին պատահեցան կը-
ռիւներ և կարեւոր դէպքեր, որոնց միայն կարեւորնե-
րէ մի քանիսն այստեղ կը գրենք:

Վեկ. 7-առաւօտը կանուխ մեզ իմաց տուին թէ
Սիսնէի կողմէն թրքական զինուորների և պաշկաօղու-
զների մի մեծ խումբ կըգայ Զէյթուն օդուութեան գը-
նալու համար: Գիւղացի կորիճների մի մասը Սէկի
մօտերը կարեցին անոնց առջև և երեք ժամի չափ կը-
ռիւ մղուելէ յետոյ թրքական զինուորները ստիպուե-
ցան ետ նահանջել և խոյս տալ Գիւլթիւի կողմերը.
որ տեղական վայրերին անձանօթ լինելով մօրորուե-
րն ճանապարհին և ձիւնի ու ցրտի պատճառով սաս-
տիկ վնասների ու նեղութիւնների են հանդիպեր:

Վեկ. 10-ին Ալի բէկի բանակի համար մի խումբ
զինուորներով Ատանայէն կը գար մեծ քանակութեամբ
ուստեստ՝ բեռցուած ջորիների և ուղտերի վրայ: Եւ
ոգեւորութեամբ հաւաքուեցան դիւղացիները՝ յոյս ու-
նենալով որ ռազմամթերք ևս գտնուի բռնների մէջ:
Կէս օրին կտրեցինք ճանապարհը մի յարմարագոյն գիւ-
քի վրայ: Երկու ժամ կատաղի հրացանաձգութենէ յե-
տոյ թշնամին մի քանի սպաննուածներ ու վիրաւորուած-
ներ ձգելով վախտի դարձաւ: Գրաւեցինք մօտա-
ւորապէս 40 բեռ ուստեստ՝ իրենց ձիերով, ջորիներով
և ուղտերով միասին: Գրաւուածների 7 բեռն աղ էր,
որը մեծ բարիք եղաւ առանց աղի մնացած ժողովու-
րի համար. իսկ մնացածներն ալիւր, բրինձ և ինչ
գտնուեցան նաև մեծ քանակութեամբ նարինջ, լիմօն,
շաքարեղէն, որոնք նուէր կը տարուէին Ալի բէկին՝
սակայն բազդի բերմամբ գիւղացի երեխաների բերնի
բաժին դարձան: Այս բոլորը ժողովրդի մէջ հաւատար
կերպով բաժանուեցաւ:

Հրամանատար փաշան վերաւորուելով ու զայրա-
նալով այս դէպքերէն՝ դեկ. 15-ին մի վաշտ զինուոր-
ներ և պաշկաօղուզներ կուղարկէ մեր վրայ: Գիւղացի-
ները ապաստանած Շուղուրի մէջ և գլխաւոր սարերի
վրայ, այդ օր մինչև երեկոյ դիմադրեցինք անընդհատ
կռուելով: Երեկոյեան թշնամին խոյս տուաւ Սու-
լա-չաթի կողմը. հայերէս միայն մի սպաննուած, իսկ թըշ-
նամին ունեցաւ շատ աւելի սպաննուածներ ու վիրա-
ւորուածներ: Հայերը գրաւեցին նաև այդ օրը մի քա-
նի չէրբէղի ձիեր և մէկ բեռ մանրուած թիւթիւն:

Վեկ. 25-ին օդը բաւական պարզ և ձիւներն
ալ հալուած լինելով քառասունի չափ դիւղացիներով
ճանապարհ ընկանք Զէյթուն անցնելու համար: Զէյ-
թունի չորս կողմը, գետի եզրերքներն ու կարեւոր անց-
քերը բոլորովին կտրած էր թշնամին: Ուրիշ միջոց
չը կար, եթէ ոչ յանգուգն կերպով շարունակել վը-
տանգաւոր ճանապարհը թշնամու վրանների մօտով.
քանիցս անգամ հորկ եղաւ զինուորական շղթայէն
հազիւ 5-10 քայլ հեռաւորութեամբ անցնել այդ-
քան գիւղացի բազմութեամբ. սակայն կամբը և յան-
դգնութիւնը յաղթելով ամեն արգելքներին և ան-
նկարագրելի նեղութիւններին՝ արդուեցաւ մեզ հե-

տեւեալ օրը կէս գիշերին հասնել քաղաքի արեւմտեան կամրջի տողէ: Կարելի չէ բացատրել սիրելի ընկերներէ և ժողովուրդի կտրիճ մասի արտայայտած բուռն զգացումներն ու ուրախութիւնը, երբ մեզ տեսան իրենց մէջ և բոլորովին ողջ առողջ. որովհետեւ կարծեր էին թէ մենք սպաննուած ենք թշնամուն կողմէ և մեր գլուխներն ալ կտրուած:

Սոյն մեր գալը, որն առաջին անգամն էր մեծ պաշարումէն ի վեր, պատճառ դարձաւ ամեն գիշեր, գաղտնի կերպով հաղորդակցութիւն և երթևեկութիւն անել Զէյթունի և Ֆրանուզի մէջ: Հ.-Մ.

ՆԱՄԱԿ ԿԻՆԻԿԻԱՅԻՑ. ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ.

*** 28 ապրիլ 1896

Խոստովանները, հսկողութիւնները աւելցած են ամբողջ Կիլիկիոյ մէջ, զոր կառավարութիւնը ժամանակէ մ'ի վեր իր մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձուցած է: Սուէիայէ մինչև Ալէքսանդրէթ և մինչև Մերսին կը հսկեն մի քանի օսմ. պահակ շոգենաւեր: Իսկ ցամաքի վրայ, մեծ եռանդով խճուղիներ կը շինուին ամեն կողմ. այս ճանապարհներու շինութեան համար բռնի կաշկատցնեն շայերը, որոնք սակայն տեղ տեղ կը դժկամակին յանձն առնել այդ տարապարհակ աշխատութիւնը:

Զէյթունի մէջ հիւանդութիւնը վերջացած է. հիւպատոսները դեռ կը մնան Զէյթուն: Անդրեան հիւպատոսը, Տօրթ. Շէփրտի հետ, ապրիլի 10-ին Զէյթունէն մեկնելով Հալէպ վերադարձած է Այնթապի ճամբով, բայց իր տեղ փոխանորդ կարգած է հայասոս մէկը, Մր. Մէքեալիմ: Թուրք փոխ-գայմագամ մը և թուրք մալ-միւլտիի մը նստած են Զէյթուն. բայց Զէյթունցիք միշտ կը բողոքեն անոնց ներկայութեան դէմ և անոնց հետ ոչ մի յարաբերութիւն չեն ընել. արդէն Զէյթունցի ապստամբ պետները տակաւին Զէյթունի վանքն են և կը սպառնան կրկին շարժման գիմել, եթէ շուտով չգործադրուին իրենց արեւմտ ձեռք բերած առանձնաշնորհումները. հիւպատոսները խոստովանել կընեն և կը ջանան հանդարտեցնել ժողովուրդի գրգռեալ միտքը և արգար զայրութիւնը: Երեք անձեր, Փայլակ, Արթուր և Կարչուլ, իբրեւ շնչակեան, պահանջուելով Թուրքաց կողմէ, հիւպատոսները մեծ դժուարութեամբ յաջողած են համոզել Զէյթունցիները զանոնք յանձնելու, անձամբ երաշխաւոր ըլլալով և մուրհակ տալով թէ անոնց կեանքին վնաս չպիտի տրուի. այդ երեք անձերն հիմա Մարաշի մէջ հսկողութեան տակ են, իբրեւ աւանդ (էմանէթ):

Այնթապէն գացած վաշտն ալ վերադարձաւ Զէյթունէն և մէկ քանի օր միայն կենալով Այնթապ, Հալէպէն եկած յաջորդական և ստիպողական հեռագիրներուն վրայ՝ շուտով մեկնեցաւ դէպի Հալէպ:

Անցեալ շաբաթ Ֆրանսական և իտալական հիւպատոսները Զէյթունէն Մարաշ գալով՝ միւլտիսարը ֆիաշային առաջարկած են բանտարկեալներն արձակել. դրացի 12-էն, որոնք մարգասպաններ են, բոլորը կարձակեմ — ըսած է փաշան: «Բոլորն ալ թող մնան» — կըրեն հիւպատոսները և վշտանալով կը վերադառնան Զէյթուն. իրենց վերադարձէն վերջ՝ բանտարկեալներէն միայն 15 անձինք ազատ թողուած են:

Ֆրանսական զեապանին մի գործակատարը Մարաշ եկած է, Եէնիճէ. գալէի մէջ լատին վանական հ. Սալվաթ օրի սպանութեան գործին վրայ քննութիւն բանալու համար:

Ալպիսթանէն արժանահաւատ անձէ մը մեղ հասած մի նամակով կիմանանք թէ՝ Զէյթունցիներու սպանման գործին համար հոն թուրք քննիչ մը եկած է և պէտք եղած քննութիւնները կատարելէ վերջ, վերադարձած է. հոն բռնի խլամուծիւն ընդունող Հայերը վերադարձած են իրենց քրիստոնէական կրօնքին. նաեւ քաղաքին մէջ մուսուլման կանչեր է թէ՝ որքիստոնեաներուն վնասող և անոնց կեանքը ըսողները 3 ամիս բանտարկութեան և 1 ոսկի տուգանքի պիտի ենթարկուին: Եւրոպական պետութիւնները խաբելու համար դերասանական խաղեր և արտաքին ձեւակերպութիւններ են անտարակոյս:

Այնթապի կառավարութիւնը շնորհակալութեան գիր մը պատրաստելով ի մասին երկրին բարւոք վարչութեան և տիրող ընդհանուր ապահովութեան և անդորրութեան (.), կառաջարկէ տեղւոյն կրօնական պետերուն, Ամերիկեան գօթէճի նախագահին և Ֆրանսիականներուն որ ստորագրեն. բայց անոնք կը մերժեն: Ասոր վրայ շաբաթ մը վերջ Այնթապի հայ հասարակութիւնը երկայն և կծու բողոքագիր մը պատրաստելով կուղարկէ երեք օրինակ, Սուլթանին, մեծ Եպարգոսին և Ատիէին. այդ գրութեամբ յանուն հինգ հազար թշուառներու կը բողոքուի նոյնմբեր 4-ի արիւնալի դէպքերուն դէմ, իսլամներու կատարած վայրագութիւններուն դէմ, երկրին ցարդ չխաղաղելուն դէմ, վարժարաններու փակուած մնալուն դէմ: Այնթապի բոլոր ժողովուրդը գրգռուած և ոգևորուած է սա գաղափարով թէ՝ թշնամին որքան ճնշէ, մենք ալ այնքան աւելի պէտք է ծանրանանք անոր վրայ:

Միւս կողմէ Այնթապի թուրքերն ալ բողոքոյ հակառակ հեռագիր մը տուած են Պօլիս թէ՝ Հալէպի մէջ այնթապցի բանտարկեալները մէկիկ մէկիկ կարձակուին, թէ ասոնք խռովութեան պատճառ եղող անձերն էին և անոնց վերադարձը քաղաքին մէջ նոր խռովութիւններու տեղի կուտայ: Կրտսի թէ թուրքերու այս հեռագիրն իբր պատասխան՝ հրաման եկած է վալիին որ արձակուող Հայերը մինչև 5 ամիս Հալէպ մնան: ԵՌԱՆԴ.

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ.

Կ. Պօլիս, 23 մայիս 1896.

Կ. Պօլսոյ մէջ քանի մը օրէ ի վեր լուր կը պտտաւր թէ թիւրք յեղափոխականները որոշած են ցոյց մը ընել Պայրամի առաջին օրը և նոյն իսկ փորձ մը ընել սուլթանին կեանքին դէմ. բայց այս զրոյցներն իրականութիւն չգտան:

Այսօր, շաբաթ, սուլթանը Երլարգէն իշաւ Տօլմա-Պաղճէ և սովորական հանդէսներէ ու արարողութիւններէ վերջ՝ վերադարձաւ Երլարգի պալատը. և սակայն ամենափոքրիկ շարժում մը իսկ չեղաւ թիւրքերու կողմէ, որոնք, ընդհակառակը, ճամբուն երկու կողմերը շարուած՝ բարեկեցին իրենց դահլիճ սուլթանը, և այսպէս ապացոյց մը ևս տուին իրենց ստրկութեան և ապիկարութեան:

Ոստիկանութիւնը շաբաթէ մը ի վեր մեծ եռան-

գով զբաղած էր մշտեղէն վերցունելու կասկածելի տիպերը. 2,000-էն աւելի Հայեր և Թուրքեր ձերբակալուեցան մի քանի օրուան մէջ: Տուներ և խաներ կը կոխեն և անմեղ Հայեր կը տանին կը բռնադատեն: Փափազ քեօփրիւի խոնք կոխելով՝ մէջի բոլոր պանդուխտները կը ձերբակալեն, օտապաշին ալ միտին: այս վերջինին սնտուկն ալ խուզարկելով 80 ոսկի կը գտնեն ու կը գրաւեն: Նոյնպէս կը կոխեն Օրթալը խանը, կը ձերբակալեն 60 հօգի և վարձակալներէն մէկուն 200 ոսկին ալ կ'առնեն: Քանի որ լին վիճակը բոլորովին սոսկալի է: Հարցաքննութիւնները գիշերը անդի կ'ունենան. մինչև լոյս լուցի ձայներ կը լսուին. ծեծի և չարչարանքի չափը չըկայ. երկու Հայեր, Մարգար և Զարուծիւն, ծեծի ու չարչարանքի տակ մեռած են և Մանուկ անունով մէկ ուրիշն ալ խելագարուած է. օրը երկու հօգույ մէկ լծայինի հաց կուտան. շատեր տախտակի կամ բոլորովին գետնի վրայ կը պառկին: Բանտարկուած թուրք յեղափոխականներն ալ Հայերու պէս և Հայերէ աւելի նեղութեան ու չարչարանքի կենթարկեն: Ձերբակալուած հայ պանդուխտներէն շատերը սե կառքերու մէջ դնելով կը տանին... կրնան թէ իրենց հայրենիքը կը զրկեն: Ներքինական վարժարանի երկու աշակերտներ, Ղազարամ Արրահամեան և Մկրտիչ Սիմօնեան, տասնական տարի շղթայակապ բանտարկութեան դատապարտած են: Կը խօսուի թէ պայրամէն վերջ բանտարկուածները պիտի արձակուին (ի հարկէ կամ բոլորովին անմեղները և կամ անոնք որ կարողանան կաշառք տալ):

(Օսմ. կառավարութիւնը իր կոշտութեան և միջոցառման օրէնքներու մասին տգիտութեան մէկ նոր ապացոյցն ալ տուաւ վերջին օրերս, նախատեսելով Փրանսական դրօշը:

Կառավարութիւնը իմացած էր թէ Մէսոփրիի „Congo“ շոգենաւով 52 հայ յեղափոխականներ կուգային Պոլիս: Զորքաւարժի առաւօտ 40-50 ոստիկաններ կը յարձակին շոգենաւին վրայ և կուզեն բռնութեամբ դուրս հանել Հայերը. նաւապետը իրողութիւնը իմանալով հրաման կ'ընէ նաւաստիներուն որ շոգենաւէն վռնեն զանոնք. նաւաստիք ջրհանով եւ ուսցած ջուր տեղացնելով ոստիկաններուն վրայ, կը յաջողին ստիպել այս վերջինները որ խայտառակաբար թողուն շոգենաւը:

Այս անյաջող և կոշտ փորձէն յետոյ կառավարութիւնը իր յատուկ խորամանկութեան կը հետեւի՝ ձեռք անցունելու համար այդ Հայերը:

Կառահանգստի վերատեսչութեան քարտուղարութեամբ, որ երիտասարդ Թոն մ'է, իր մեծին՝ Տիլավէր փաշայի հրամանով՝ կերթայ առանձինն կը ներկայանայ „Congo“-ի առաջին նաւապետին և ինքզինքը Փրանսական դեսպանատան խորհրդականին կողմէ եկած ձեւացնելով կը պահանջէ որ շոգենաւին մէջ գտնուող 52 Հայերը յանձնուին կառավարութեան:

Նաւապետը քաղաքավարութեամբ կը յայտնէ թէ կուզէ տեսնել դեսպանատան խորհրդականին հրամանը յայտնող թուղթը: Տիլավէր փաշայի թարգմանը կը շուարի, չը կրնար գոհացուցիչ պատասխան մը տալ: Նաւապետը այդ լիբր ստախոսութեան հանդէպ սաստիկ կը դայրանայ և բոլորովին անպատուելով ու խայտառակելով զայն դուրս կը վռնէ շոգենաւէն:

Կառավարութիւնը դարձեալ գոհ չըլլար. կուզէ անպատճառ ձերբակալել այդ Հայերը... Դիմում կընէ դեսպանատան, որ անյաջող արդիւնք կունենայ. մեռ կողմանէ արդէն նաւապետը կը յայտարարէ թէ, եթէ նոյն իսկ Փրանսական դեսպանատունը հրաման տայ, ինք չը պիտի յանձնէ Հայերը, ինք միայն բացարձակ տէր ըլլալով շոգենաւին մէջ: Կառավարութիւնը ճարահատեալ կը բաւականանայ խիստ կերպով պաշարելով և թող չըտալով որ „Congo“-ի Հայերը որ և է հաղորդակցութիւն ունենան ցամաքի հետ: Հինգշաբթի շոգենաւին մէկնման օրը՝ ոստիկանութիւնը ուղեց արգիւնել նաև Եւրոպացիներուն շոգենաւ մտնելը, իրենց ճամբորդ բարեկամաց ողջերթ մողթելու համար. քանի մը ծիծաղաշարժ գէպքեր պատահեցան այս առթիւ և Եւրոպացիք այս կերպով կրցան անգամ մ'ալ Տաճիկներուն վայրենութեան վրայ դաղափար մը կազմել:

Հիմա Փրանսական դեսպանատունը այս գործի առթիւ 80,000 Փրանք տուգանք կը պահանջէ օսմ. կառավարութեան, Փրանսական հողի բռնաբարութիւնն ունի:

Ղուրպան Պայրամի առթիւ սուլթանի փառաց համար առաջին ողջակէզը ըրին Հնչակեանները: Ուրբաթէն շաբաթ լուսնալու գիշերը Հնչակեան տէնօրը Ղալաթիոյ փողոցներուն մէկուն մէջ. դաշոյնով սպաննեց յայտնի լրտես և մատնիչ Արաբկիրցի Սեդրաթ Թահիր Աչքապաշեանը: Այս վատը միայն վերջին 8-10 օրուան մէջ 70-80 անմեղներ ձերբակալել տուած էր իր լրտեսութեամբ: Սեդրաթ, սուլթանի կառավարութեան այդ հաւատարիմ ծառան, Ղալաթիոյ բաղնիքը կը տարուի արիւնամաթախ և թէլլաքներու բազկաց մէջ կը փչէ իր վերջին շունչը:

Ղալա մատնիչին սպանութիւնը ոգևորիչ տպաւորութիւն ունեցաւ հասարակութեան վրայ, որ սաստիկ յուզուած ու կատաղած էր նորա վերջին մատնութիւններէն: Տէնօրիստը, շնորհիւ վիհ. սուլթանին, ազատ և ապահով է:

Կ. Բ.

ՆԱՍՏԱԿ ԽԱՐԲԵՐԴԻՅ.

Խարբերդ, 25 Ապրիլ 1896.

Երկու երեք ամսէ ի վեր Խարբերդի միսիօնարների միջոցաւ զգեստ և դրամ կը բաշխուէր հայ կարօտեալներու, որոնք Բալուէն, Մալաթիայէն, Արաբկիրէն և ուրիշ տեղերէ խռնուած են քաղաքիս մէջ: Այս բանը, ի հարկէ, չէր կրնար հաճոյ թուել սուլթանի կառավարութեան, որի նպատակն է բնաջինջ ընել հայ ժողովուրդը, բայց որը, տեսնելով թէ դժուար գուցէ և վտանգաւոր է սուրով կոտորելով Հայուն վերջը բերելու ծրագիրը, միտքը դրած էր մնացած Հայերը ջնջել անօթութիւնով, բոլորովին մերկ և անպատասխար թողլով ձիւնի և անձրևի դէմ և իւրեական ամէն միջոցէ զրկելով: Այս նպատակով կառավարութիւնը իսլամ ժողովուրդին մէջ գրգռութիւն մը յարուցնելու կարողանալու դադրեցնել նպատակներու բաշխութիւնը. իսլամները սկսան յուզուիլ և խօսք հանեցին որ, իբր թէ միսիօնարները կարօտեալներուն զգեստ և դրամ բաշխած միջոցին, զէնք ալ կը բաշխեն, որը Անգլիան գաղտնի միջոցներով զրկած է եղեր: Այս կերպով նախ ուղեցին թաշիխնը կարել, բայց չյաջողեցան. յետոյ զգեստի ալ դրամի բաշխման դէմ դժուարութիւններ յարուց

կառավարութիւնը և մասամբ յաջողեցաւ. որովհետեւ 15 օրէ ի վեր ասոնց բաշխուած դագրած է: Ի զուր կարօտեալները հարկւորներով ու հազարներով միսիօնար Մըստըր Պառնըմի մօտ կերթան կուգան և նըպաստ կը խնդրեն: Երկու օրէ ի վեր լուր մը ելած է թէ նպաստներու բաշխումը պիտի արտօնուի, բայց կառավարութեան կողմէ պաշտօնեայ մը պիտի հսկէ որպէս զի չըլլայ որ նպաստներու հետ զէնք ալ տրուի:

Տնուր և ալէկոծ վիճակի մէջ է այժմ Խարբերդը: Հայ խանութպան կամ արհեստաւոր գրեթէ չէ մնացեր. մնացողներն ալ օրը հազիւ 2-3 ժամ կը բանան իրենց խանութները: ապահովութիւն չկայ. առհասարակ ալ արդէն դադրած է: Այս թշուառ կացութեան մէջ ժողովուրդը դարձեալ իր յոյսը չէ կորած. բայց ի մի քանի անձերէ որոնցմէ մին, բնիկ խարբերդցի Վարապետ Տեօփէճեանը, բոլորովն ասելի դարձած է ամէնուն իր յայտնի վատութիւններով և անխիղճ մատնութիւններով:

Արտուի թէ Աղճատաղի Բիւրտերը զայրացած են կառավարութեան դէմ, որ վերջերս իրենց ցեղակիցներէն 3-400 հոգի է կոտորած, որովհետեւ այս վերջինք մի քանի զինուոր սպաննած էին, իրենց նուիրական տեղոյն մէջ արարողութեան միջոցին խայտառակ վարմունք ունեցած ըլլալուն պատճառով:

Տէրսիմի Բիւրտերն ալ կըսուի թէ կատաղած են կառավարութեան դէմ, որ խորամանկութեամբ կոտորածներու բոլոր պատասխանատուութիւնը իրենց վրայ կը ծանրացնէ: Յիշեալ Բիւրտերը վրէժխնդրութեան խորհրդով վերջերս յարձակած են մի քանի թուրք գեղերու վրայ և զանոնք աւարի են առած. նաև այսօր լուր կառնենք թէ Տէրսիմի Բիւրտերը Ձմիւնադի Թուրքերուն վրայ են յարձակած. բայց այս լուրին ըստուգութիւնը կասկածելի կը թուի:

Անցեալ շաբթու գատիին տունը գողեր մտնելով 300 լիւրայի ապրանք տարած էին. երկու օր վերջ գողերը բռնուեցան և անոնցմէ մին դիմագրած ըլլալով սպաննուեցաւ: Անդին Հայուն տունը կը հրկիւզեն, հայ կտրիճներ կըսպաննեն, հայ գեղջիկներ կը լլկեն. կառավարութեան հոգը չէ, որովհետեւ այդ ամէնի զոհերը կեաւով ունենալ են:

Աւրոպան այս ամէնը կը անտեսէ, բայց շահով կուրացած լուռ կը մնայ. Է՛հ, թող նա խուլ և համր մնայ. մենք որ կորուսինք մեր սիրելիներն ալ, մեր տուն ու տեղն ալ, մեր հարստութիւնն ալ, այլևս կորսնցնելիք բան չունինք, բայց միայն մեր կեանքը. մենք վճռած ենք պատուաւոր կերպով մեռնիլ, մինչև վերջը կուտելով յուսահատութիւնը չէ մեզ համար. կամ կը վերջնայ ստրկութիւնը կամ կը վերջնայ Հայութիւնը: — Թող այս բանը լաւ գիտնայ անամօթ Եւրոպան:

ՍԱՐՍԱՓ.

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ.

Վան, 10 ապրիլ 1896:

Անցեալ չորեքշաբթի, ապրիլ 3¹⁵ ին, առաւօտեան ժամը 1 ին (ը. թ.), քաղաքամէջ Տիրամայր եկեղեցւոյ բակին մէջ, ուր խոնոհած էր ժողովուրդը, տեղի ունեցաւ նշանաւոր մատնիչ և դաւաճան կարապետ հալբանդեանի սպաննութիւնը, որը մահուան դատապարտուած էր Վանի շնչակեան Մամնաճիւղի վարչութեան կողմէ: Շնչակեան տեւորիստը որ ստանձնած էր այդ վատն սպաննելու գործը, վաղուց ի վեր կը

պտրտէր նորա ետեւէն. վերջապէս ներկայացաւ յարմար րոպէն: Նոյն օրը մատնիչը այդտեղ ներկայ էր իր փեսայի յուղարկաւորութեան հանգիսի առթիւ: Խուռն բազմութեան աչքի առջև, տեւորիստը մի րէվօլվերի պայթիւնով վար կը գլորէ երկար տարիներ հոյ ժողովուրդի և մանաւորապէս Աստուրականի հայութեան բազմին հետ խաղացող անդամը: Գնդակը ձախ կողէն էր անցեր: Մահը անմիջական, չէր օգնութեան հասնող բժիշկը գնդակի վերջնական ազդեցութեան պայմանաժամը որոշած էր 24 ժամ: Բարեբաղդաբար մահառիթ գնդակն իրեն այցելելէն դեռ չանցած 18 ժամ, մահապարտը տուաւ իր վերջին դժու խաշունչ հանգանքը և անցաւ իր վաղեմի բարեկամ և գլխաւոր «պաշտօնակից» Շէյխ Պողոսի գիրկը, որը դեռ հագիւ ասկէ երեք ամիս առաջ ստացած էր նոյնպէս շնչակեան մահաբեր գնդակը, իբր վարձրատրութիւն իր բազմամեայ, ազգագաւ գործերի և մատնութիւնների¹⁾:

Տեւորիստը ազատ է. ժողովուրդեան ոգևորութիւնը աննկարագրելի է: Տեղական կառավարութիւնը յանձին կարապետ Նալբանդեանի կորցնելով իր ամենագլխաւոր աջակիցներէն մինը, շուարած ու կատաղած է:

ՀԱՄԻՐԱՄ.

ՄԵՈՅ ՎԻՃԱԿԸ.

ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԵՐԿԻՂԱԼԻ ԿԱՅՈՒԹԻՒՆ. — ԱՍՊԱՏԱԿԱՅԻՆ ԿՈՒԻՒՆԵՐ ԽՆՈՒՍԻ ԿՈՂՄԵՐԸ.

(Շարունակութիւն) *

Միւլթէսարիֆ փաշայի այս արդարասիրութեան վրայ, որով բոլորը չի բանտարկեց, Թուրքերը շատ բարկացան և երկրորդ ջարդ մը անխուսափելի էր, եթէ նորէն կառավարիչը չարգիլէր մեծ դժուարութեամբ: Մի քանի Հայերու այս մատնութիւնը աւելի ևս կատաղեցուց թուրք բարբարոս ժողովուրդը, որ արդէն կատաղեց դարձած էր հետզհետէ՝ գրգռուելով Բաղէշի և Կարնոյ Թուրքերէն իրենց հասած յանդիմանական նամակներէն, որը դեռ կը շարունակուին գալ. նաև ոմանք էհրամ և այլ կանացի զգեստներ զրկած են մշեցի Թուրքաց, զանոնք կին հաշուելով — քանի որ չի կրցան Հայերը ջարդել:

Մեր վիճակը շատ անապահով է. թէև այժմ սկսած ենք շուկան երթեկել, բայց անհամարձակ քայլերով, և Թուրք մը թէ որ կամենայ բաւ մը գնել Հայէ մը, իր ուզած գնով կառնու, այսինքն 10 ղըշ արժող ապրանքի մը 5 ղըշ. գին տալով: Հարկահաւաքութիւնը իր սասկայի վիճակին մէջն է. փուղեր կը շրջին հարկահաւաքներ և ինչ որ գտնեն կը ծախեն կիսագին, անանկ որ բարեկենդանին կով մը 20 ղըշն կը ծախուէր: Տեղոյս կառավարչին պաշտօնակութեան պատճառներէն մին ալ կը կարծուի լինել այն որ, գրեթէ Կ. Պոլիս թէ ժողովուրդն աղքատ է և չկրնար տուրք տալ և ըստ այնմ 1-2 ամիս պայմանաժամ ուղեր է: Անորէն սուլթանը, ի հարկէ, չէր կրնար ներել կառավարչին այս մահացու յանցանքը, որով կուգէր այս վերջինն մի քիչ անդորրութիւն տալ ուժասպառ և թշուառ հայ ժողովուրդին:

Ժողովուրդի դրութիւնը ամէն կողմէ յուսահատ

1) Տես «Հնչակ» թ. 4:

*) Տես «Հնչակ» թ. 11:

տա-կան է. կոտորածի վախը և անօթութիւնը մի կողմէ, հարկահաւարներու և քրդերու հարստահարութիւնները միւս կողմէ՝ ժողովուրդը շատ կը ծնշեն ու կը վճատեցնեն, մանաւանդ որ մենք՝ անցեալի օրերու փորձառութեամբ գիտենք թէ սուլթանը ետ չպիտի կենայ մեզ բնաջինջ ընելու իր քաղաքականութենէն՝ որուն մէջ ցոյց տալով ուստի մէկ անշուշտ: Սուլթանի և իր կառավարութեան կեղծ ու պատիւ խոստումներէն և կարծեցեալ բարի տրամադրութիւններէն եւրոպական պետութիւնները միայն կրնան կամ կուզեն խաբուիլ և այսպիսի իրենց շահերուն զոհել մեզ պէս տառապեալ ազգ մը: Այժմ՝ քաղաքիս բնակիչ մէջ կը գեղերին երեսունէ աւելի Հայեր, որոնց վրայ գործադրուած խտրութիւնը և չարչարանք անպատմելի են. ի մասնաւորի Տոշոեան եղիպարը ենթարկած են քստմենքի և աներեւակայելի տանջանքներու:

Արդեւս Համիտիները յարձակեր են Խնուսի գաղթի գիւղին վրայ, կոտորելու և թաղանելու նշտապակով. բայց պատահելով Խնուսի և Սասունի շնչակեան խմբին, մեծ ջարդ կրելով ետ կը նահանջեն և իրենց դիակները վերցնելու համար իսկ չեն համարձակիր կրկին մօտենալ յիշեալ գիւղին:

Արդէն անցեալ աշնան ալ Խամուր-Բերդի մօտերը պատահած էր մի կռիւ շնչակեան խումբի և քիւրտերու միջև, յորում սպաննուած էին Հաճի Հալաւար Նշանաւոր քիւրտը և Հոջոյի տղայ Երուստի տղան. կառավարութիւնը չգտնալով հայ հրոսակներն անդամները, անոնց տեղ ձերբակալած էր հետեւեալ անմեղ անձինքը. — Գաղթիկէն՝ Միսաք Նիրակոսեան, Աղլամէլի քէն՝ Տօնօեան Թորոսը, Խալիլ-Համուշ գիւղէն՝ Իրիցու Օհանը, Գամանոսէն՝ Սլօի տղայ Մկրտիչը և դարձեալ Գաղթիկէն՝ Յակոբ Եփէստին: Այժմ առջի երկուքին համար վճռուեր է 10-ամեայ բանտարկութիւն, երրորդին՝ 15-ամեայ, իսկ չորրորդին ու հինգերորդինը դեռ կը մնայ անորոշ:

Մօտ օրերս Խլաթայ (Անլաթ) գիւղերուն մէջ սարսափելի հարստահարութիւններ և աւարառութիւններ են տեղի ունեցած. թալանուած են 12-ի չափ գիւղեր, նա մանաւանդ Դերիք անուն մեծ գիւղը:

Մենք այս ամէն նեղութիւններու հակառակ, հաստատ կը մնանք մեր յեղափոխական սկզբունքին վրայ և մեր հաւատքը կը ջանանք աներջնել վճատածներու և յուսահատներու. բայց ամենէն անտանելին ու զգուշելին մի քանի անկիղձ Հայերու մատնութիւնն է: Հիմա Մշոյ մէջ, արդէն ծանօթ մատնիչ Զալաօի Սեդրակէն զատ, ունինք նաև անկէ աւելի վատթարները, որոնք են. վերոյիշեալ մշցի Աթառամեան Միսաք, բաղէջի Պօզօեան Մուրատ, Մշոյ Յրօնք գեղացի յիշեալ Պետրոսը և Հիւրմիւղեան Նազար. ասոնք առանց զգածուելու անմեղ արիւն մտնալով դեռ շատերու կորստեան պատճառ կը լինին: Թուրքաց ձեռնարկած բարենորոգման սկզբին վրայ այսչափը առ այժմ բաւ համարելով, հետզհետեւ եղածները տեղնիտեղը կը գրեմ:

ՍԻՄ ՍԱԼ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԴԵՊԸՆ.

(Շարունակութիւն) 1)

Ս. Սարգիս Թաղում մինչ այդ սարսափելի վայրա-

1) Տես «Հնչակ» № 4, 5, 6 եւ թ

գութիւններ կատարվում էին, միւս կողմից մի կատարել յարձակում էլ գործեցին Հայերի Ս. Նիրակոս մեծ թաղի վրայ: Արեւմտեւ և Արեւարտագ փոքրիկ հայ թաղերը որոնք խառն էին թուրք բնակիչներով, կողպուեցան, բնակիչ Հայերը ջարդուեցան և մնացորդ մի քանի տասնեակներն էլ փախել ապաւինել էին Գաղթիական հիւպատոս M. Meirie-ի տանը: Ինչ անգթութիւններ ասեալ կատարուեցան. թուրք զօրքերը բռնում էին 5 տարեկան հայ աղջիկներ և տանելով զօրանոց լքում էին և անգթաբար իրանց վայրենի կրքերի տակ սպաննում էին այդ անմեղ արարածներին: Մեծ մղկիթի դրան մօտ մատակարարացի դրան դրսի մեծ ճանկերից զոյգ զոյգ կախել էին չորս աղջիկ և չորս տղայ, 4-7 տարեկան՝ որոնք յափշտակուեցան իրանց գորովայի մայրերի գրկից. նրանց կախողն է մի դաժանատեսիլ փօրիս Թէփթիք Էփ. անունով: Հոկ. 21 շաբաթնօրեայ կոտորածն էլ՝ տեւեց մինչև ժամը (ը.թ.) 12-ին և ամէն մահմետական քաղաքեացի թուրք թաղերը, նախընթաց օրուայ նման աւարներ բաժանելու համար: Աշխարհի վրայ կատարուած ամենասոսկալի վայրագութիւնների և ոչ մէկի կարգին չէ կարելի դասել այս խժգոնութիւնը, որ թուրք մահմետական աշխարհը իբր նախատիք քաղակրթութեամբ զօրաւոր բայց կեղծ աշխարհի դէմ իր հպատակների նկատմամբ արեց, օգտուելով Եւրոպայի պետութիւնների իրար դէմ նախանձէն և կեղծ քաղաքականութենէն:

Լուսացաւ կիրակի առաւօտը. արդէն Տիգրանակերտի շրջականներում գտնուող 40-50-ից աւելի հայ և միւս քրիստոնեաների գիւղերը ծխում էին, ի նախապիս քրիստոնեայ աշխարհին: Ամենամեծ քրիստոնեայ գիւղից հազիւ ազատուեց 40-50 հոգի, մեծաւ մասամբ ծանրապէս վիրաւորուած: Հոկ. 22ի կիրակի օրն էլ՝ մինչև երեկոյ շարունակուեց Տիգրանակերտի կոտորածը. շրջակայ գիւղերը բոլորն էլ աւերուելով, բնակիչները ջարդուելուց յետոյ, մնաց միայն Տիգրանակերտի Հայոց ս. Նիրակոս մեծ թաղի կէսը: Երեք օր շարունակ կոտորած և աւարառութիւն եղաւ Տիգրանակերտում և շրջակայքը, մնացած ժողովուրդն էլ սովից և ցուրտից օրեկան հարիւրաւորներով մեռնում էին:

Այս խժգոնութիւնները թուրքերի կողմից մի մասնաւոր խլրտում չէր, այլ բարձրագոյն այսինքն կայսերական իրաւունքով, ունեւոր քրիստոնեայ (հայ) տարրը փռագնելու մի վայրենի դիտաւորութիւն: Որովհետեւ, այս դէպքից 25-30 օրեր առաջ՝ երբ սուլթանը եւրոպական պետութիւնների ճնշման տակ ստիպուած ստորագրեց Անատոլիայի (Հայաստանի) բարենորոգման ծրագիրը, այդ ստորագրութիւնից առաջ արդէն իր սուլթանական դադանի իրաւունքներով գրգռեց թուրք խաժանին, որ իրանք աղմուկներ դուրս բերեն, չընդունեն բարենորոգումը և այլն:

Արդէն հրահանգուած թուրք ժողովուրդը երբ լսեց թէ այդ խաբեբայական ծրագիրը վաւերացուել է, մղկիթներում գաղանի ժողով գումարելով՝ սկսեցին իրանց մէջ քրիստոնեաները ջարդելու խորհուրդներ անել և իրանց մէջ մեծ դուժարներ հանգուակել: Նաև հեռագրեցին սուլթանին թէ իրանց թոյլ տայ կոտորելու քրիստոնեայ կեանքներին: Թէ թուրք բաշխուղաք ժողովուրդը իւր մահահոտ հեռագրին ինչ պատասխան ստացաւ սուլթանից, այս նոզկալի եղելու-

Թիւնները ինքնին ցոյց կուտան պերճախօս կերպով:

Անցեալ տարուայ Սասունի արիւնհակ գէպ-
քում աչք խիող Արեւմուտքը թող այսօր գայ ու
տեսնէ թէ ինչպէս լաւ կատարեց իրա գերասանը
իր բարբարոսական գերը, որի նմանը նախապատմական
դարերում անգամ չէ տեսնուել:

Վաղաքակրթութեան զենիթին հասած, գէպի հա-
տարակ մահկանացուները արհամարհանքով նայող 19-
րորդ դարու Արեւմուտքը թող այսօր գայ ու լողայ
իրա պատրաստած արեան լճերի մէջ. թող լսէ հա-
զարաւորներով որք ու անտէր մնացած հայ մանուկ-
ների լացն ու կոծը:

Ծեր և երիտասարդ ջարդուեցան, մանուկներ
նիզակի ծայր անցան, յղի կանանց փորը պատուեցաւ,
հարսեր բռնաբարուեցան և աղբիկներ գերի տարուեցան.
այս ամենը մի կողմ ձգած՝ քաղաքակրթութիւն գո-
ւացող Արեւմուտքը տակաւին լուռ՝ է:

Ահա այսօր ծպտեալ՝ վերագտնում ենք, Տիգ-
րանակերտի գիւղերի և մօտիկ գիւղաքաղաքների աւե-
րակները ման գալուց յետոյ: Ամեն տեղ միևնոյն վայ-
րագութիւնները: Գիւղերի միայն աւերակներն են մը-
նացել և ամայի անապատ են դարձել. բնակիչների
ամբողջ ջարդուելուց յետոյ, կառավարութեան յա-
տուկ հրահանգով, մեռածներն այրուած և մոխիրներն
ու սեւացած ոսկորները գետերի ափքներին են արուած:
Գիւղերի բնակիչներից կենդանի մնացած մի քանի
տանեակների արած պատմութիւնները շատ սրտակը-
տուր են: Զօպրիւնի մէջ մնացած մի հատիկ հայ
աղբիկը մի Բուրգի ձեռքից 1 ու կէս մէճիտիէի գնե-
լով հետո՝ Տիգրանակերտ բերեցի. հակառակ իրա
հասակի փորութեան, թուրք «կանոնաւոր» զօրքերից
մի ենթասպայ վայրենաբար բռնաբարել է նրան. լու-
սիւ է անուշը և 11 տարեկան է:

Այդ և դրա նման վայրենութիւններ շատ են,
որ մարդի գորիչը սարսափում է նկարագրելու: Ամեն
տեղ կրկին նորանոր գէպքեր են պատահում. սպառ-
նալ, կողոպտել, բռնաբարել թուրքերի համար սովո-
րական սրհնտի կարգին տեցաւ. օրեկան տասնեակնե-
րով հայ աղբիկներ թուրք պաշտօնեաների և զինուո-
րականների կրքերին զոհ են գնում:

(Կը շարունակվի.)

ծագին: Միայն Հանեայի մէջ 6,400 զօրք կայ, որոնց թիւը քիչ
օրէն կը հասնի 10,000-ի: Գլխավորը Արաքսի շրջաններէն բաղկացած
պաշտպանութեան գնդը ծանր անկարգութիւններ կընեն քաղա-
քին ու շրջակայ գաւառակներուն մէջ ուր ստէպ կը պատահին
աւար. հրճութիւն եւ սպանութիւն:

Նոյն անապատով վիճակին նման մնաւած Ռէթիմօ և
Հնրաքլիօն. Ռէթիմօյի շրջակայքը Մուրնիս, Թարաքա, Կալաթա
և ուրիշ քրիստոնեայ գնդեր այրուած ու աւերակ
դարձած են: Նոյնպէս Սուլայի եւ Ռուսիայի մէջ թուր-
քերը այրեցին Բրիտանական թագաւորի տունը: Կրեւտէն
թագաւորի փախուստը ամէն օր կապաւորանին Յունաս-
տան եւ ողբալի կերպով կը նկարագրեն կղզոյն վիճակը:

Միւս կողմէ, ապստամբներուն թիւը երկայրով կը շատնայ
և կղզիին կարեւոր դիրքերը անոնց ձեռք կիյնան. ամբողջ
Աֆօրօնօնա գաւառակը եւ Ռէթիմօի գաւառակի մի մասը,
ինչպէս նաեւ Բիսամօ, Սէլիօ, Բիքսօնիա եւ Աֆա-
քիա գաւառակները ապստամբ վիճակի մէջ են: Բիսամօ գա-
ւառակի Գաւթէլի անուն դիրքին մէջ ալ Կրեւտայիները պա-
շարած են թուրք զօրաց վաշտ մի. ուրիշ մի քանի դիրքերու
մէջ ալ թուրք զօրքերը նիւն ինկած են: Ապստամբներուն թիւը
ոմանք մինչեւ 20,000 կը հաշուեն. ասոնց 4-5000-ը միայն կա-
նոնաւոր զինեալ զուգներ են. մնացեալները ապստամբային
խումբեր են՝ նպաստաւոր դիրքերու մէջ ամրացած: Ապստամ-
բական քաղաքները յայտարարութիւն մը հանած է, որով Կրեւտէն
միացած կը յռակէ Յունաստանի հետ:

Սեւանիկէն, Իսմիլէն եւ Սուրիայէն շարունակ թուրք զօր-
քեր կը փոխադրուին Կրեւտէն: Լուրի մը համաձայն, Կրեւտէն
պաշտպանող զօրքերուն թիւը 35 վաշտի պիտի ամբողջանայ.
ուրիշ լուրի մը համաձայն, արդէն 35 վաշտ զօրք ներկայ են
այս պահուս Կրեւտէի մէջ եւ դեռ 16 վաշտ ալ պիտի դրուի,
Հնայեղով որ զօրքերը քրեթէ մտիկ եւ անոթի են: Նոր կուսա-
կալ Ապստամբ փաշան պաշարման վիճակի եւ զինուորական
օրէնքի ենթարկած է ամբողջ կղզին:

Կրեւտի գէպքերը խորին տալաւորութիւն եւ մեծ յու-
զում առաջ կը քննեն Աթէնքի մէջ. հասարակաց կարծիքը
սաստիկ զրգռուած է. Լազիկները աւելի կը հասնին տիրող
յուզումը. Յունաստանի ամէն կողմերը ի նպաստ կործիմ Կրե-
ւտայիներուն յայտնի հանգանակութիւններն են քաջուած, որոնց
առատածեղնութեամբ կը մամուկեն Յոյները: Յունաս-
տանէն խումբ խումբ կամաւորներ կը դիմեն իրենց կրեւտացի
նոջայրներուն օգնութեան:

Հելլենական նաւատորմից ատաղջն հրամանին մեկնելու
պատրաստ վիճակի մէջ դրուած է: Հելլենական կառավարու-
թիւնը շրջաբերական մը դրկած է մեծ պետութիւններուն, որով
կը ըողորէ Դրան կողմէ Կրեւտի դէմ ձեռք անուած զինուո-
րական խիստ միջոցներուն դէմ եւ կը յայտարարէ թէ, եթէ
Դուրք չփութայ կատարելապէս վերահաստատել Կրեւտի նը-
նավարութիւնը Հալեպայի դաշինքին համաձայն եւ զործերու վի-
ճակն աւելի ծանրանայ, առաջ զաւիթ հետեւանքներուն պա-
տաւաստաւորութիւնը կը վրայ շարունակ: Կրեւտի թագաւորը,
որ չուզէր Ռուսիան վշտացնել՝ չեղմ կողմանակից է կառավարու-
թեան պահպանման. քայք ժողովուրդը եւ նոյն խիստ նախա-
բարութիւնը ներկայ օրակն յարմար կը դնուին Կրեւտէն՝ միա-
ցնելու, Յունաստանի հետ. ուստի վարչական, վարչական կը
վախճուի որ Յունաստանը փոխէ ցարդ բոնած խաղաղ քա-
ղաքականութիւնը, տեղի տալով հասարակաց կարծեաց բոնած
հոսանքին առջեւ. այդ պարագային, նոյն խիստ թագաւորին գա-
հէն հրամարումս հաւանական կը թուի:

Մակեդոնիոյ մէջ թուրք զօրքերուն անսկսելովը նոր խլրաման
նշաններ սկսած են երևիլ. Գուկար ապստամբներ կրեւտ են
եկած Բրիլէքի եւ Գիթօլիայի միջեւ եւ յարձակած են թուրք
գաւթիէիէն ըստ վրայ: Իսկուկի մէջ կառավարչի տան դուռը
կախուած զօրմուած է մի կարծիք որոշակի հանուեալ վերտա-
նութեամբ: Մեր իրաւունքները մեծ գե, կամ քեզ
մա՞հ: Այս դէպքերու վրայ Մակեդոնիա վերստին ուղարկուած
են 8 վաշտ զօրք:

Կրեւտէ՝ 250,000, բնակիչ ունի, որոնց 40,000-ը միայն մահ-
մետական:

Ա Պ Տ Ա Կ

ԵՐԳԻԹԱՐԱՆԱԿԱՆ - ԲԱՂԱԲԱԿԱՆ - ՀԱՆԴԵՍ

(ՄԻԱՄՍԵԱՅ)

Այս տեսակ «Ապտակ»-ի նորոգող տարեշրջանի N. 1 Մա-
յիսի համարը: Նկարը — 24-րդը գնացից. — Ինն շնոր մեղած
եւ չե պիտի մեկնենք...
«Ապտակ»-ի այդ համարի բովանդակութիւնն է. — Մու-
թրիւ խօսք «Ապտակ»-ի նոր տարեշրջանի անկիւ. — Մու-
թրիւ գերեզմանութիւնը՝ Եգիպտոսի մէջ. — Թղթակցութիւն՝ Ա-
մերիկայէ. Ազգային Մուտ եւ տեղ՝ քննարկութիւն. — Մուլթանի
քաջագործութիւնը. հորոսական մեծամարտ. — Դարձապետարան.
— Ամերիկա եւ Հայաստան. — Իմաստուն տնօրէնութիւն մը. —
Մուլթանի մէկ իրաւունք. — 61-ը յօդուածը. — «Ապտակ»-ի հանե-
լութիւնը. նախորդ թիւուսի տնօրէնը. բնաւ թիւ 2. — Ազդ. —
«Իրաւապետութեան» տարեկարծը:
«Ապտակ»-ի այդ N. 1 համարով սկսում է նրան հրատա-
րական տնօրէնը տարեշրջանը: Այն բաժանորդները, որոնք ցան-
կանում են նորոգել իրենց բաժանորդական «Ապտակ»-ի
նորոգող տարեշրջանի համար, նրաւորում են անյապաղ անել այդ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.
London W. [Angleterre].

ՏԳՈՐԱՆ «ՀՆԶԱԿ»-Ի ԼՕՆԴՕՆ.

